



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«15» նոյեմբերի 2010 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 33-Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ
ԶՔԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՈՒ ԱՅԴ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶՔԱՂԵՑՆՈՂ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 13-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի 2008 թվականի օգոստոսի 8-ի
«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար և
կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոններն
զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և

ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» N 13-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի՝

- ա. վերնագրից և 1-ին կետից հանել «և կրտսեր» բառերը,
- բ. վերնագրում «ու այդ պաշտոններն» բառերը փոխարինել «ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ» բառերով,

2) հրամանով հաստատված N 1 հավելվածի՝

- ա. վերնագրից և 1-ին կետից հանել «և կրտսեր» բառերը,
- բ. 9-րդ կետի երրորդ պարբերությունում «և» բառերը փոխարինել «և (կամ)» բառերով,
- գ. 12-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «ու քվեարկության» բառերը,
- դ. 12-րդ կետի 14-րդ ենթակետում «քվեարկության» բառը փոխարինել «գնահատման» բառով,
- ե. 16-րդ կետում «ընդունում է որոշում» բառերը փոխարինել «կազմում է արձանագրություն» բառերով,
- զ. 19-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«5) իրականացնում է հարցազրույցի փուլում մասնակցի (մասնակիցների) կողմից տրված պատասխանների գնահատում.»
- է. ուժը կորցրած ճանաչել 12-րդ կետի 12-րդ, 13-րդ և 19-րդ կետի 4-րդ ենթակետերը,

3) հրամանով հաստատված N 2 հավելվածի՝

- ա. 9-րդ կետի երրորդ պարբերությունում «դառնում են» բառերը փոխարինել «դառնում է» բառերով, իսկ «և» բառերը փոխարինել «և (կամ)» բառերով,
- բ. 16-րդ կետում «ընդունում է որոշում» բառերը փոխարինել «կազմում է արձանագրություն» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ